

նոյնն է ասում նաեւ Ա. հատորի 165-րդ էջում: Ահա Բ-ի բացատրութիւնը, որ նա տալիս է իր եւ Ռոզէնի դատած սիրալիք ընդունելութեան մասին էջմիածնում:

«Թեքեւս մենք գլխաւորապէս երկրի («Հայկական Ծրջան») պետի յանձնարարութիւններին եւ Արովեանի բարեկամական միջնորդութեան էինք պարտական, որ մեզ ցոյց տրուեց մի այնպիսի ընդունելութիւն ու հիւրասիրութիւն, որ գերազանցեց մեր բոլոր ըստպասելիքները» (նոյն, էջ 167):

Նոյն կապակցութեան մէջ (էջ 169) յիշատակելով հայ, քիւրդ եւ թաթար ժողովրդական երգերի հաւաքելու իր մտադրութեան մասին, Բողենշտէզտ ասում է.

«Ես գլխաւորապէս ազնիւ Արովեանի եռանդուն ջանքերին եմ պարտական, որ իմ այդ յոյսերը ոչ բոլորովին անկատար մնացին: Ծանօթ չլինելով ուսմիօրէն-հայերէնին՝ ես ստիպուած պիտի լինէի գոհանալ այն սակաւաթիւ քրդերէն ու թաթարերէն (ժողովրդական) երգերով, որ պատահաբար միայն ձեռքս էին ընկել, եթէ Արովեանը յանձն առած չլինէր ինձ ուղարկելու Երեւանի սարդարիատում գործածական ժողովրդական երգերի մի ժողովածու: Այդ ժողովածուի առաջին՝ Արովեանի ձեռքով գրուած տետրակը, գերմաներէն լիակատար մեկնաբանութիւնով (Kommentar) մէկտեղ, ես ստացայ դեռ Եւրոպա վերադառնալուցս առաջ:

Միաժամանակ խոստում էլ առի, որ շուտով պիտի յաջորդեն մի քանի նման ուրիշ տետրեր եւս: Իմ գիտնական բարեկամ, Բերլինի պրոֆեսոր Պետերմանին³⁾ յաջողուել է՝ ուսմական հայերէնով գրի առնուած այդ երգերը բոլորը վերծանել, բացի մէկ բառից: Ժողովածուն տակաւին շատ է փոքր՝ այն առանձին հատորով հրատարակելու, միւս կողմից նա շատ է մեծ՝ ամբողջը այստեղ գետեղելու համար: Դրա համար էլ ես գոհանում եմ այստեղ առաջ բերելով միայն մի երգ, որ իմ տրամադրութեան տակ գտնուողների շարքում ամենից արժէքաւորն է թւում ինձ»:

Անմիջապէս յաջորդում է այդ երգի գերմաներէն չափածոյ թարգմանութիւնը (Armenisches Grablied վերնագրով): Ապա Բողենշտէզտ (նոյն՝ էջ 186) մասնաւոր յիշատակութիւն է անում եւ այն մասին, որ Արովեան նրա տրամադրութեան տակ է դրած եղել ժողովրդական կոյր երգիչ Քեչիշ Օղլիի թաթարերէն (անգրկ. թուրքերէն) երգերի մի փոքրիկ ժողովածու:

3) Վերջինս Գերմանիայի առաջին հայագէտներից մէկն էր:

Իր աշխատութեան երկրորդ հատորում (էջ 145, 147) անգրադառնալով նոյն խնդրին եւ յիշելով ընթերցողներին տուած իր խոստումը՝ տալ նրանց ձեռքը «կոյր հայ աշուղ Քեչիշ Օղլիի ոտանաւորները գերմաներէն թարգմանութեամբ, քիւրդ ժողովրդական երգերի մի մեծ ժողովածուի հետ մէկտեղ», Բողենշտէզտ ասում է, որ նա ղժբախտաբար մասամբ միայն կատարել կարող է իր խոստումը, քանի որ, «Երեւանի իմ բարեկամ Արովեանի յանկարծական մահով ցամաքել է այն աղբիւրը, որից որ ես քաղում էի իմ տեղեկութիւնները»:

Ըստ երեւոյթին, Բողենշտէզտին իր աշխատութեան («Հաղար ու մի օր Արեւելքում») այդ՝ երկրորդ հատորը հրատարակելիս միայն հասել է Արովեանի վախճանի լուրը:

Վերոյիշեալ խօսքերին գերման ճամբորդը անմիջապէս կցում է (Բ. 145).

«Ես յետոյ առիթ կ'ունենամ մի քանի մանրամասներ վեր հանելու այդ ազնիւ մարդու կեանքից: Մի մարդ, որ իրեն նպատակ էր դրել՝ պայքարի եւ ամէն տեսակ զրկանքների դեմով գերման լեզուն եւ բարբերը տարածել իր հայրենակիցների մէջ, Արարատի ստորոտում, նա, որ մի շարք տարիներից ի վեր Հայաստան այցելող իւրաքանչիւր մի գերման ցամաքորդի համար եղել է սիրալիք ու յաճախ նաեւ օգտակար առաջնորդ»:

Այդտեղ այդչափով գոհանալով Արովեանի մասին՝ Բ. անմիջապէս առաջ է բերում Քեչիշ Օղլիից հատուածներ, ինչպէս նաեւ, «դարձեալ Արարատի սարահարթերում ստեղծագործուած, քրդական ժողովրդական երգեր» ու Արովեանի մասին կցում այս տեղեկութիւնը (Բ. 147). —

«Ես այս փորձանքը (Քեչիշ Օղլիի մասին), ինչպէս նաեւ առահասարակ Քեչիշ Օղլիի մասին բոլոր հաղորդածներս, պարտական եմ Երեւանի իմ ազնիւ բարեկամ Արովեանին, ու

նրանք իմ ազնիւ բարեկամ Արովեանին, ու

նրանք իմ ազնիւ բարեկամ Արովեանին, ու

նրանք իմ ազնիւ բարեկամ Արովեանին, ու